

# ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԹԱՆգԱՐԱՆ

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄԱՍԿՈՒՅՑԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԻՆ

ՀՀ, ք. Երևան, Մոսկվայի 40,  
Հեռ. 51-60-21, 56-00-21  
Էլ. հասցե՝ museum@toumanian.am



HOVH. TOUMANIAN  
MUSEUM

REPUBLIC OF ARMENIA  
MINISTRY OF EDUCATION,  
SCIENCE, CULTURE AND SPORT

40 Moskovian Str., Yerevan, RA.  
Tell: 51-60-21, 56-00-21  
Email: museum@toumanian.am  
20.10.2020

## ԴԻՍՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

Հայ ժողովուրդը կրկին ոչխացման վտանգի մեջ է: Սեպտեմբեր 27-ից մինչ օրս Աղբեջանը շարունակում է վայրագ հարձակումներ Հայաստանի և Արցախի խաղաղ բնակության վրա, ոչխացնում է հայ դարավոր մշակութային ժառանգությունը, որը համամարդկային քաղաքակրթական արժեք է: Վտանգված է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ոչ միայն ինքնությունը, այլև ֆիզիկական գոյությունը: Եվ այս ամենն իրազործելու համար Աղբեջանը աջակից ունի Թուրքիայի Հանրապետությանը: Հայ ժողովուրդը, ցավոր, կարծեք կրկին վերապրում է 100 տարի առաջ տեսածն ու ապրածը: Հարավային Կովկաս է վերաբարձել Թուրքիան՝ շարունակելու իր ցեղասպան քաղաքականությունը:

100 տարի առաջ, գրեթե միշտ այս շրջանում էր, որ մեծ հումանիստ, խաղաղաբար ու խաղաղություն պարտադրող Ամենայի Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանն իր կոչն էր հղում լուսավորյալ պետություններին ու աշխարհի ժողովուրդներին՝ իր ազգի կործանման դեմն առնելուն իրենց ակտիվ մասնակցությունը բերելու համար: «Հաստատ համոզված ես, որ այս դժվար րոպեին քաղաքակիրք ժողովուրդները չեն ցանկանալ լինել հայերի արյունութ ողբերգության և կործանման անտարբեր դիտորդներ, և հանուն հումանիզմի ու մարդասիրության չեն մերժի գալ օգնելու հայ ազգին, որն ապացուցել է իր ընդունակությունը՝ կուլտուրայի և առաջադիմության մեջ»:

Ուստի Հովհաննես Թումանյանի թանգարանը՝ որպես Մեծ մարդասերի թողած ավանդների անմնացորդ կրողը՝ ի դեմս իր ժողովրդի, դիմում է Ձեզ՝

բարձրացրեք ձեր ազնիվ, վճռական ու խստագույնս դատապարտող ձայնը՝ ի պաշտպանություն քաղաքացիական ազատ կյանքի միջազգային արդար իրավակարգի, որն այժմ կողսորեն խախտված է ազրեսորների կողմից արցախահայության նկատմամբ,

եղեք մարդասիրության և մշակութային արժեքների պահպանման առաջամարտիկը Ձեր երկրում և համայն մարդկության համար

եկեք միասին դադարեցնենք հետզհետեւ ծավալվող պատերազմը, կատարենք մարդու երեխայի, մոր, տարեցի ու երիտասարդի ապրելու իրավունքի պաշտպանության սրբազն գործը:

պատերազմի ընթացքում մշակութային ժառանգության վայրերի միտումնավոր ոչխացումը միասնաբար որակելով հանցազործություն՝ եկեք բարձրածայնենք, որ խաղաղություն, միայն խաղաղություն է հարկավոր աշխարհին. որա հաստատման գործում ցուցաբերեք Ձեր մեծ ու լուսավոր դերը:

Քանզի միայն խաղաղ համակեցությամբ է հնարավոր արարել, որի հաստատման համար այսօր արիաբար ու անկոտրում կամրով իր կյանքն է նվիրաբերում հայ զինվորը:

Հարգանքով՝

Հովհ. Թումանյանի թանգարան